

Պեստիցիդները հարկավոր է գնել

- միայն հավատարմագրված խանութի
- փաթեթավորված եւ կշռաբաշխված փոքր բաժիններով
- միայն պիտակավորված եւ օգտագործման հրահանգով
- նշված օգտագործման ժամկետով եւ ամբողջական փաթեթով

Թունաքիմիկատները գնելիս ավելի նպատակահարմար է ձեռքի տակ ունենալ օգտագործման համար թույլատրելի պեստիցիդների ցանկը, որը նորացվում է եւ հաստատվում յուրաքանչյուր տարի:

Իսկ ինչպե՞ս վարվել օգտագործումից հետո մնացած պեստիցիդների հետ:

- Յուրաքանչյուր փաթեթ հարկավոր է խնամքով փակել, նրա վրա պետք է մնան պիտակը եւ օգտագործման հրահանգները:
- Պեստիցիդները չթողնել բաց երկնքի տակ:
- Դրանք տեղավորել օժանդակ կառույցի դարակների վրա, երեխաներին եւ կենդանիներին անհասանելի տեղերում:

Օգտագործման համար ոչ պիտանի թունաքիմիկատները պետք է ոչնչացվեն շրջակա միջավայրի համար անվտանգ պայմաններում: Այս հիմնախնդրով զբաղվում են պետական կառույցները, քանի որ դա շատ ծախսատար եւ դժվար իրագործելի գործընթաց է: Սակայն մեզանից յուրաքանչյուրը կարող է օգտակար լինել այս հարցում՝ տեղեկացնելով հայտնաբերված հնացած կամ արգելված թունաքիմիկատների կուտակումների մասին տեղական մարմիններին, շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաեւ մեր կազմակերպությանը /հասցեն՝ վերջին էջում/:



1

«Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի
Հասարակական
կազմակերպություն



Նախագահ՝
Ելենա Մանվելյան

375019, ԶԶ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ, սենյակ 609
Հեռ: (+374-1)-52 36 04
E-mail: office@awhhe.am
URL: www.awhhe.am

**Ձգուշացե՛ք
Ժամկետանց եւ արգելված
թունաքիմիկատներից**

www.awhhe.am

Yerevan 2004





Պեստիցիդները քիմիկատներ են, որոնք օգտագործվում են գյուղատնտեսության բնագավառում բույսերի վնասատուների դեմ պայքարելու նպատակով: Դրանք թունավոր են կենդանի օրգանիզմների համար, այդ պատճառով էլ պոտենցիալ վտանգ են ներկայացնում մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար: Բոլոր պեստիցիդները տարբեր աստիճանի վտանգավորություն ունեն: Այդ հատկությունը ավելի է արտահայտվում, երբ դրանք օգտագործվում են ոչ ճիշտ կամ գերքանակությամբ:

Լրացուցիչ վտանգ են ներկայացնում **ոչ պիտանի պեստիցիդների** պաշարները: Դրանք են՝

- ժամկետանց թունաքիմիկատներ
- արգելված ուժեղ թունաքիմիկատներ
- թունաքիմիկատներ, որոնք ոչ ճիշտ պահպանման հետեւանքով քայքայվել են: Այդ թունաքիմիկատներում քայքայման հետեւանքով առաջանում են նոր նյութեր, որոնք ավելի վտանգավոր են մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար:

Հնացած թունաքիմիկատների հիմնախնդիրը ընդհանուր է անցումային շրջանում գտնվող բոլոր երկրների համար, այդ թվում նաեւ Հայաստանի համար:

Հնացած թունաքիմիկատների մեծ պաշարների կուտակման պատճառները.

- կոլտնտեսությունների եւ սովխոզների վերացում
- թունաքիմիկատների պահեստների եւ կուտակված մնացորդների նկատմամբ վերահսկողության բացակայություն
- կարճաժամկետ, ժամկետանց կամ արգելված թունաքիմիկատների ներկրում
- հափշտակումներ թունաքիմիկատների պահեստներից
- գերմատակարարում
- չհամակարգված հումանիտար օգնություն կամ գնում



- գնում անկանխատեսելի իրավիճակների համար
- ներմուծման թույլ վերահսկողություն
- ագրեսիվ վաճառք
- վատ պայմաններում պահպանում
- անհամապատասխան ձեւավորում կամ փաթեթավորում
- թունաքիմիկատի քայքայում
- անվտանգ ոչնչացման տեխնոլոգիաների բացակայություն

Հնացած պեստիցիդների վնասակարությունն արդյունավետորեն նվազեցնելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս շատ կարեւոր է հասկանալ պեստիցիդների ներկայացրած վտանգը:

Հնացած թունաքիմիկատների կիրառումը ոչ միայն իր բուն նպատակին չի ծառայում, այսինքն չի ազդում վնասատուների վրա, այլեւ աղտոտելով արտաքին միջավայրը բացասաբար է անդրադառնում մարդու առողջության վրա՝ առաջացնելով կարճատեւ կամ երկարատեւ, սուր կամ քրոնիկ թունավոր ազդեցություն: Թունաքիմիկատները մարդու օրգանիզմ են ներթափանցում բերանի խոռոչով, շնչական ուղիներով կամ մաշկի միջոցով: Նույնիսկ ամենափոքր քանակները կուտակվելով օրգանիզմում հանգեցնում են հիշողության կորստի, վերջույթների թուլության, հոգնածության, դիմադրողականության անկման, անպտղաբերության, մեռելաձեւության, ամլության, բնածին արատների, ուռուցքների եւ այլն: Վերջիններս դժվար բուժելի են եւ ծախսատար: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների տարեկան 20000 եւ ավել մարդ է մահանում թունաքիմիկատներով թունավորումից:

Շրջակա միջավայրի թունաքիմիկատներով աղտոտվածությունը բացասաբար է անդրադառնում նաեւ կենդանական աշխարհի վրա: Կենդանիները կարող են թունավորվել ուղղակիորեն՝ դրանց պեստիցիդներով մշակելիս կամ անուղղակիորեն՝ պեստիցիդներով աղտոտված մսուկ կամ ջուր օգտագործելու հետեւանքով: